

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
հրավերի պարզաբանման մասին

Հայտարարության սույն տեքստը հաստատված է գնահատող հանձնաժողովի
2025 թվականի մարտի 3-ի թիվ 3 որոշմամբ և հրապարակվում է
“Գնումների մասին” ՀՀ օրենքի 29-րդ հոդվածի համաձայն
Ընթացակարգի ծածկագիրը «ԵՊՀ-ԷԱՃԱՊՁԲ-25/57»

«Երևանի պետական համալսարան» հիմնադրամի **Ֆիզիկայի ինստիտուտի կարիքների համար լաբորատոր սարքերի** ձեռքբերման նպատակով կազմակերպված **ԵՊՀ-ԷԱՃԱՊՁԲ-25/57** ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովը ստորև ներկայացնում է հրավերի վերաբերյալ ստացված հարցադրումները և դրա վերաբերյալ տրամադրված պարզաբանումները.

Հարցադրում N 3 «Հարգելի պատվիրատու, խնդրում եմ նշել համար 10 կետի սեղանի տակ դրվող պահարանի համար օգտագործվող նյութը»:

Պարզաբանում N 3 «Հարգելի՛ մասնակից, տեղեկացնում եմ հետևյալը. 18մմ հաստությամբ լամինացված ԴՄՊ, երիզատված, սպիտակ գույն»:

Հարցադրում N 4 «Հարգելի՛ պատվիրատու: Առաջին և երկրորդ չափաբաժնով պահանջվող սարքերի համար երկուսի դեպքում էլ տեխնիկական բնութագրում նշված է, որ պետք է լինեն նախատեսված թունավոր, պայթյունավտանգ, կիսահաղորդչային և այլ տեսակ քիմիական նյութերի պահեստավորման համար: Խնդրում եմ պարզաբանել ի՞նչ նյութերի համար են դրանք նախատեսված, ի՞նչ ազդեցիկության ու պայթյունավտանգության դասեր ունեն: Խնդրում եմ հստակ նշել թե ի՞նչ նյութից պետք է պատրաստված լինեն սարքավորումները, որպեսզի բավարարեն ձեր պահանջներին: Քանի որ կա նաև պայթյունավտանգության գործոն, խնդրում եմ նաև նշել սարքերի իրանի և խցիկների մետաղի հաստությունները: Ի՞նչ էներգիայով պայթյունի պիտի դիմանա: Միևնույն ժամանակ, օդաքարշ պահարանի համար պահանջվում է Ֆիզիկական չափեր՝ ոչ ավել 1505×855×2355 մմ և Աշխատանքային մակերես՝ 1.2-1.8 մ²: Ձեր կողմից նշված արտաքին չափսերի ապահովման դեպքում (լայնությունը ոչ ավել քան 1505 մմ և խորությունը ոչ ավել քան 855 մմ) աշխատանքային սեղանի մակերեսն այս սարքավորման դեպքում հնարավոր չէ ապահովել 1.2-1.8 մ²: Ձեր կողմից պահանջվող արտաքին չափսեր առավելագույն սահմանում պահպանելու դեպքում աշխատանքային սեղանի մակերեսները լինում են օրինակ 1320*670 1300*650 և տատանվում են 0,8 - 0,9 մ² սահմաններում: Խնդրում եմ պատասխանել, ընդունելի՞ են աշխատանքային սեղանի այդ մակերեսներով: Սառնառանի դեպքում նշված է Ջերմաստիճանի միջակայք՝ առնվազն սառնարան՝ +1 °C -ից +15 °C: Ընդունելի՞ է +3 °C to +16 °C միջակայքը»:

Պարզաբանում N 4 «Հարգելի՛ մասնակից, Հարգելի՛ մասնակից, տեղեկացնում եմ հետևյալը. Կիսահաղորդչային նյութեր- Սիլիցումային թաղանթներ, SnO₂, ZnO, Fe₂O₃, ինդիումի օքսիդ և այլն Քիմիական նյութեր - ջրածնային պերօքսիդ, ամոնիակ, ֆորմալդեհիդի ջրային լուծույթ, պրոպիլեն գլիկոլ և այլն Սարքավորումների իրանի նյութը - պողպատե կոնստրուկցիա՝ թիթեղի հաստությունը ոչ պակաս 1.0 մմ Ընդունելի՞ են աշխատանքային սեղանի այլ մակերեսներով տարբերակը - Այո Սառնարանի ջերմաստիճանի միջակայք. ընդունելի՞ է +3 °C to +16 °C միջակայքը - Այո Պայթյունավտանգության աստիճանը՝ նվազագույն»:

Սույն հայտարարության հետ կապված լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար կարող եք դիմել «ԵՊՀ-ԷԱՃԱՊՁԲ-25/57» ծածկագրով գնահատող հանձնաժողովի քարտուղար Լ. Այվազյանին:

Հեռախոս՝ 060 710 009:

Էլեկտրոնային փոստ՝ gnumner@ysu.am: